

2024թ. չորրորդ եռամսյակի

«Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի

կողմից կատարված աշխատանքների

Հաշվետվություն

1. Պարկի տարածքում գիտական հետազոտություններ.

2024թ. չորրորդ եռամսյակում հիդրոկենսաբանի կողմից ուսումնասիրվել է Սևանա լիճ թափվող Մասրիկ և Մարտունի գետերի տարբեր հատվածների ջրերում 20°C և 37°C ջերմաստիճանում աճեցված սապրոֆիտ մանրէների թվաքանակը և կոլի-ինդեքսը (աղիքային ցուպիկների խմբի մանրէների քանակը 1լ. ջրում): Զուգահեռ նաև ուսումնասիրվել է ջրում լուծված թթվածնի և օրգանական նյութի պարունակությունը՝ ըստ պերմանգանատային օքսիդացման արժեքի: 20°C և 37°C ջերմաստիճանում աճեցված սապրոֆիտ մանրէների քանակական արժեքների հարաբերակցության արդյունքների հիման վրա՝ որոշվել է գետերի ջրերի ինքնամաքման գործընթացը:

Ելնելով մանրէաբանական ցուցանիշների ստացված արդյունքներից՝ գնահատվել է գետերի ջրերի որակը:

Գետ Մասրիկ

Մեծ Մասրիկ գյուղից դուրս հոսող հատված - կատարված հետազոտությունների արդյունքում պարզվել է, որ դիտակետի ջրերում 20°C և 37°C ջերմաստիճանում աճեցված սապրոֆիտ մանրէների թվաքանակը համապատասխանաբար կազմել է 2000 ԳԱՄ/մլ և 315 ԳԱՄ/մլ, իսկ կոլի-ինդեքսը՝ 6,3 հզ.ԳԱՄ/լ: Մանրէների միջոցով կատարվող ինքնամաքման արժեքը կազմել է 6,3: Դիտակետի ջրերում լուծված թթվածնի պարունակությունը կազմել է 10,3 մգ O₂/դմ³, իսկ պերմանգանատային օքսիդացման արժեքը՝ 1,6 մգO/դմ³ (աղ.1):

Համաձայն ՀՀ առողջապահության նախարարության՝ 2018թ. N 09-Ն հրամանի՝ «Բեկրեացիոն նպատակով ջրօգտագործման վայրերում մակերևութային ջրային ռեսուրսների ջրի որակին ներկայացվող հիգիենիկ պահանջների» N 2.1.5.001-18 սանիտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին որոշման, ընդհանուր կոլիֆորմ մանրէների (37°C ջերմաստիճանում աճեցված աղիքային ցուպիկների խմբի մանրէներ) թվաքանակը չպետք է գերազանցի 500 ԳԱՄ/100մլ արժեքը: Նշված արժեքը դիտակետի ջրերում գերազանցել է ՍԹ-Կ-ն (սահմանային թույլատրելի կոնցենտրացիա) 1,2 անգամ:

Աղյուսակ 1.Սապրոֆիտ մանրէների քանակը, կոլի-ինդեքսը, ջրում լուծված թթվածնի պարունակությունը և պերմանգանատային օքսիդացման արժեքը Մասրիկ գետի տարբեր հատվածների ջրերում

Դիտակետ	Սապրոֆիտ մանրէների թվաքանակ, ԳԱՄ/մլ		Կոլի-ինդեքս, հզ. ԳԱՄ/լ	Լուծված թթվածին, մգO ₂ /դմ ³ ,	Պերմանգանատային օքսիդացում, մգO/դմ ³
	20°C	37°C			
Մասրիկ գյուղից դուրս հոսող հատված	2000	315	6,3	10,3	1,6
Գետաբերան	1650	320	10	8,6	2,6

Գետաբերան – 20°C և 37°C ջերմաստիճանում աճեցված սապրոֆիտ մարէների թվաքանակը՝ նախորդ դիտակետի համեմատ էապես չի փոխվել, իսկ կոլի-ինդեքսի արժեքը բարձրացել է՝ կազմելով 10 հզ. ԳԱՄ/լ, որը ՍԹԿ-ն գերազանցել է 2 անգամ: Որոշակիորեն նվազել է ինքնամաքման գործընթացը՝ (5,1): Բարձրացել է պերմանգանատային օքսիդացման արժեքը՝ կազմելով 2,6 մգՕ/դմ³, իսկ լուծված թթվածնի պարունակությունը, ընդհակառակը, նվազել (8,6 մգՕ₂/դմ³):

Գետ Մարտունի

Փորձանմուշները վերցվել են գետի սակավաջուր ժամանակում:

Վերին հոսանք- կատարված հետազոտությունների արդյունքում պարզվել է, որ գետի վերին հոսանքի դիտակետի ջրերում 20°C և 37°C ջերմաստիճանում աճեցված սապրոֆիտ մարէների թվաքանակը համապատասխանաբար կազմել է 950 ԳԱՄ/մլ և 143 ԳԱՄ/մլ, իսկ կոլի-ինդեքսը՝ 1,6 հզ.ԳԱՄ/լ, որը ՍԹԿ-ն չի գերազանցում: Մանրէների միջոցով կատարվող ինքնամաքման արժեքը կազմել է 6,6: Զրում լուծված թթվածնի պարունակությունը եղել է 9,5 մգՕ₂/դմ³, իսկ պերմանգանատային օքսիդացման արժեքը՝ 1,3 մգՕ/դմ³ (աղ.2):

Աղյուսակ 2.Սապրոֆիտ մանրէների թվաքանակը, կոլի-ինդեքսը, լուծված թթվածնի պարունակությունը և պերմանգանատային օքսիդացման արժեքը Մարտունի գետի տարբեր հատվածների ջրերում

Դիտակետ	Սապրոֆիտ մանրէների թվաքանակ, ԳԱՄ/մլ		Կոլի-ինդեքս, հզ. ԳԱՄ/լ	Լուծված թթվածին, մգՕ ₂ /դմ ³ ,	Պերմանգանատային օքսիդացում, մգՕ/դմ ³
	20 °C	37 °C			
Վերին հոսանք	950	143	1,6	9,5	1,3
Մինչ արտահոսքերի մուտքը	2130	770	200	-	1,4
Ստորին հոսանք	300000	110000	28000	7,8	10,6

Մինչ Մարտունի համայնքի մեխանիկական մաքրման կայանի արտահոսքերի մուտքը- գետը, հոսելով Մարտունի համայնքի միջով՝ աղտոտվում է ֆեկալ-կենցաղային հոսքաջրերով, որի հետևանքով վերցված փորձանմուշում վերին հոսանքի համեմատ արձանագրվել է մանրէների թվաքանակի աճ, հատկապես աղիքային ցուպիկների: Այսպես, 20°C և 37°C ջերմաստիճանում աճեցված սապրոֆիտ մարէների քանակը համապատասխանաբար կազմել է 2130 ԳԱՄ/մլ և 770 ԳԱՄ/մլ, իսկ կոլի-ինդեքսը՝ 200 հզ.ԳԱՄ/լ, որը ՍԹԿ-ն գերազանցել է 40 անգամ: Նվազել է ինքնամաքման ինտենսիվությունը (2,8):

Ստորին հոսանք (Մարտունի համայնքի կեղտաջրերի մեխանիկական մաքրման կայանի արտաընթացի մուտքից մոտ 200մ ներքև)- ուսումնասիրությունները ցույց են տվել, որ մաքրման կայանի արտահոսքերը (միջին օրական ծավալը կազմում է մոտ 2,7 հզ.մ³) լցվելով գետ, այն ենթարկվում են խիստ աղտոտման: Այսպես, 20°C և 37°C ջերմաստիճանում աճեցված սապրոֆիտ մարէների թվաքանակը համապատասխանաբար կազմել է 300000 ԳԱՄ/մլ և 110000 ԳԱՄ/մլ, իսկ կոլի-ինդեքսը՝ 28 մլն. ԳԱՄ/լ: Նախորդ դիտակետերի համեմատ նվազել է ինքնամաքման գործընթացը (2,7) և ջրում լուծված

թթվածնի պարունակությունը (7,8 մգO₂/դմ³): Բարձրացել է պերմանգանատային օքսիդացման արժեքը՝ կազմելով 10,6 մգO/դմ³:

Այսպիսով, ուսումնասիրությունների արդյուններից պարզվել է, որ հետազոտված գետերի բնակավայրերից դուրս հոսող և գետաբերանի հատվածներում ընդհանուր կոլիֆորմ բակտերիաները ռեկրեացիոն նպատակով օգտագործվող ջրերում ՀՀ առողջապահության նախարարության սահմանած չափաքանակը գերազանցել է 1.2-40 անգամ:

Համաձայն Վ. Դ. Ռոմանենկոյի՝ (Романенко и др.,1990) մակերևութային ջրերի էկոլոգասանիտարական դասակարգման՝ ըստ կոլի-ինդեքսի արժեքների՝ Մարտունի գետի վերին հոսանքում ջուրը գնահատվել է որպես «միանգամայն մաքուր», մինչ արտահոսքերի մուտքի հատվածում՝ «շատ կեղտոտ», իսկ ստորին հոսանքում՝ «չափազանց կեղտոտ» ջրերի շարքում: Մասրիկ գետում ջուրը գնահատվել է որպես «թույլ աղտոտված»:

Համաձայն Ժ.Պ. Ամբրազենի (Амбразене, 1974) դասակարգման՝ ըստ 37°C ջերմաստիճանում ապրոֆիտ մանրէների թվաքանակի՝ Մարտունի գետի վերին հոսանքի ջուրը դասվել է «մաքուր», մինչ արտահոսքերի մուտքի հատվածը՝ «թույլ աղտոտված», իսկ ստորին հոսանքը՝ «շատ ուժեղ աղտոտված» ջրերի դասին: Մասրիկ գետի դիտակետերում դասվել են «թույլ աղտոտված» ջրերի դասին:

Սապրոֆիտ բակտերիաների միջոցով տեղի ունեցող ինքնամաքրման գործընթացի ինտենսիվությունը բարձր է գնահատվել Մարտունի գետի վերին հոսանքի դիտակետում (6,6), իսկ ինքնամաքրման ցածր արժեքներ գրանցվել են Մարտունի համայնքից դուրս հոսող և մեխանիկական մաքրման կայանի արտահոսքերի թափման դիտակետի ջրերում (2,8 և 2,7):

Գլխավոր ձկնաբան-ձկնաբույծի կողմից չորրորդ եռամսյակում Սևանա լճում խեցգետնային համակեցության էկոլոգիական հետազոտություններ:

Խեցգետնի թակարդներով փորձանմուշներ են ձեռք բերվել փոքր Սևանի՝ Լճափ և մեծ Սևանի՝ Ծովակ համայնքների ջրային տարածքներից: Վերը նշված տեղամասերը ընտրվել են հաշվի առնելով լճում խեցգետնի առավել ինտենսիվ արդյունահանման հատվածները և միաժամանակ ընդգրկել հետազոտման առավել մեծ տարածք:

Սևանա լճում խեցգետնի ձևաչափական ցուցանիշների հետազոտությունները ցույց են տվել, որ ուսումնասիրվող որսաբաժնում խեցգետինների միջին երկարությունը փոքր Սևանում համապատասխանաբար եղել են՝ 9,7սմ, կշիռը՝ 23,7 գրամ, մեծ Սևանում՝ միջին երկարությունը՝ 10,0 սմ, կշիռը՝ 24,6 գրամ:

Խեցգետնի տարածական տեղաբաշխման հետազոտությունները ցույց են տվել, որ այս հիդրոբիոտը կենտրոնացված է 2-8 մետր խորություններում: Համեմատաբար փոքր չափեր ունեցող խեցգետինների (2-3 տարեկան) մասնաբաժինը 2-5 մետր խորություններում տատանվում է 60-70% -ի սահմաններում, իսկ 15 մետրից սկսած նրանց քանակը սկսում է աստիճանաբար կրճատվել: Խեցգետնի առավել խոշոր առանձնյակներ լճում հանդիպում են սահմանափակ քանակով: Մինչև մեկ տարեկան կենդանիներ են հանդիպում լճում մակրոֆիտներով ծածկված ծանծաղուտներում, որը նրանց համար ծառայում են ոչ միայն որպես թաքստոց, այլ որպես սննդի աղբյուր:

Նախորդ տարիների համեմատ խեցգետնի տարածման սահմանները չեն փոխվել: Խեցգետնի որսաբաժնում չափատարիքային կառուցվածքի հետազոտությունները ցույց են տվել, որ էգերի և արուների միջին տարիքային խմբերը կազմել են 2-3 տարեկան կենդանիները:

Ուսումնասիրության ժամանակահատվածում ջրի մակերեսային շերտերի ջերմաստիճանը օրվա տարբեր ժամերին և լճի տարբեր խորության գոտիներում տատանվել է՝ 13,0-16,0°C սահմաններում:

Սիգ- չորրորդ եռամսյակում Սևանա լճում սիգի արդյունագործական որսի ժամանակ ուսումնասիրություններ են իրականացվել Հայրավանք, Փամբակ և Ծովակ համայնքների ջրային տարածքներում, որոնք հանդիսանում են սիգի ինտենսիվ արդյունահանման վայր: Վերը նշված վայրերից ուսումնասիրվել և կենսաբանական վերլուծության է ենթարկվել սիգի 119 առանձնյակ: Որոշվել են ձկների ձևաչափական ցուցանիշները՝ երկարությունը, քաշը և սեռական արգասիքների հասունացման փուլը, տարիքը, բուվածությունը, ինչպես նաև սննդառությունը:

Սևանա լճում և նրա ջրահավաք ավազանում ձկան և խեցգետնի պաշարների հաշվառում ծրագրի շրջանակներում 2024 թ. հոկտեմբերի 28-ից նոյեմբերի 5-ը «Հիդրոլոգ» նավով իրականացվել են ձայնախորաչափային դիտարկումներ: Ուսումնասիրությունները իրականացվել են համատեղ Հ.Հ.Գ.Ա.Ա. կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոնի աշխատակիցների հետ: Կատարված ձկնաբանական հետազոտությունների արդյունքների համեմատական վերլուծությունը ցույց է տվել, որ նախաձվադրային շրջանում (հոկտեմբեր - դեկտեմբեր) սիգի հիմնական կուտակումները կենտրոնացվել է մեծ Սևանի միջին և արևելյան հատվածներում, փոքր Սևանում սիգի կուտակումներ են հայտնաբերվել՝ Ծովագարդ, , Դրախտիկ, Շորժա համայնքների և Ծովագյուղ համայնքի Արևիկ հատվածի ջրային տարածքներում: Ձկների խտությունը նախաձվադրային շրջանում մի քանի անգամ գերազանցել է սնման շրջանում՝ (ապրիլ-մայիս) ձկների խտությանը, վերջինս ապացույց է, որ հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին ձևավորվում է սիգի բազմացող վտառը:

Մեծ Սևանում Փամբակի և Ծովակի ջրային տարածքներից հանված դնովի ցանցերի մեջ եղած ձկների երկարությունը հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին տատանվել է՝ 32,6-33,1 սմ, քաշը՝ 420,3-458,2 գրամ: Բուվածության ցուցանիշը՝ $F = 1,27-1,33$, $K = 1,15-1,20$:

Ձկների հագեցվածության միջին արժեքները հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին մնացել է նույնը, ինչպիսին գրանցվել են գարնանը՝ սիգի սնվող վտառի մոտ: Վերոհիշյալ փաստը վկայում է լճում կերային բազայի առատության մասին: Նոյեմբեր ամսին սիգի նախաձվադրային կուտակումները դարձել են ավելի արտահայտված և ներկայացված են՝ 1^+ , 2^+ , և 3^+ տարեկան ձկներով, որոնք գտնվում են սեռահասունության չորրորդ փուլում: Վտառում առկա են 1^+ տարեկան ոչ սեռահասուն սիգ տեսակի ձկներ, որոնք գտնվում են սեռահասունության երրորդ փուլում: Սիգի սննդառության ուսումնասիրությունները ցույց են տվել, որ այս տեսակը շարունակում է սնվել հիմնական կերով՝ զոոբենթոսով, զոոպլանկտոնով և կողալողերով:

Սիգի միջին բեղունությունը ուսումնասիրվող ժամանակահատվածում տատանվել է 8500-25000 հատ ձկնկիթի:

Ուսումնասիրությունների ժամանակահատվածում ջրի մակերեսային շերտի ջերմաստիճանը տատանվել է՝ $11,0^{\circ}\text{C} - 15,0^{\circ}\text{C}$ սահմաններում:

Հոկտեմբեր-դեկտեմբեր ամիսների ձկանաբանական ուսումնասիրություններից ելնելով կարելի է եզրակացնել, որ Սևանա լճում սիգ տեսակի ձկները, որոնք գտնվում են սեռահասունության չորրորդ փուլում, եղանակային պայմաններից կախված, ամենայն հավանականությամբ վերարտադրության շրջանը տեղի կունենա դեկտեմբերի 25-ից և այն կշարունակվի մինչև հունվարի 31-ը: Առավել ինտենսիվ գործընթաց կարելի է սպասել հունվարի առաջին տասնօրյակում, Սևանա լճի ափամերձ գոտու ամբողջ երկայնքով՝ 5-10 մետր խորությունների վրա, գրեթե բոլոր գրունտներում, բացառությամբ տիղմի և մակրոֆիտների:

Այսպիսով, ստացված տվյալների ընդհանուր վերլուծությունը ցույց է տվել, որ Սևանա լճում սիգի կենսազանգվածը նախորդ տարիների համեմատ աճել է, ինչը պայմանավորված է հիմնականում վերջին 2-3 տարիների բեղուն սերունդների առկայությամբ, որի

պահպանությանն ուղղված միջոցառումները և լճում բնական վերարտադրությունը տվել է իր դրական արդյունքը:

Կարաս - չորրորդ եռամսյակում Սևանա լճում ուսումնասիրություն է կատարվել կարասի կենսաբանական վիճակը:

Կարասի պոպուլյացիայի հետազոտման համար փորձանմուշներ են ձեռք բերվել փոքր Սևանի՝ Դրախտիկ համայնքի ջրային տարածքից, դնովի ցանցերով, որոնց խորշերի մեծությունը տատանվել է 40 x40 մմ. և 45 x 45 մմ. սահմաններում:

Հոկտեմբեր ամսին հետազոտված առանձնյակները պատկանել են 2⁺ - 4⁺ տարիքային խմբերի: Հետազոտված կարասի 30 առանձնյակների միջին երկարությունը՝ 17,9 սմ, միջին քաշը՝ 192,2 գրամ: Բտվածության միջին գործակիցը՝ F = 3,58, K= 2,80: Ուսումնասիրվող ձկնատեսակը որսվել է 7-8 մետր խորություններից, երբ ջրի ջերմաստիճանը 16⁰c: Կարասի կերի հիմնական բաղադրիչներն են կազմել դիատոմային կանաչ թելանման ջրիմուռները, խիրոնոմիդի թրթուրները:

Կարասի կենսաբանական ցուցանիշների համեմատությունը վերջին տարիների ցուցանիշների հետ ցույց է տվել, որ միևնույն տարիքի ձկների մոտ բտվածության գործակիցը ըստ Ֆուլտոնի և ըստ Կլարկի հետազոտված ժամանակահատվածում մնում է գործնականորեն անփոփոխ, ինչը վկայում է լճում համեմատաբար կայուն կերային պայմանների առկայության մասին:

Սևանա լճում կարասի պոպուլյացիայի վրա արդյունագործական ծանրաբեռնվածության աճը բերել է պաշարների կրճատմանը, մեծ տարիքային խմբի ձկների քանակը քչացել են, տեղի է ունեցել պոպուլյացիայի երիտասարդացում:

Ձկնաբուծություն - Սևանի իշխանի պաշարների վերականգնման և ձկնաբուծության զարգացման հիմնադրամի կողմից Սևանա լճում «Գեղարքունի» ենթատեսակի ձկան պաշարների վերականգնման նպատակով 2024թ. նոյեմբերի 8-ին «Գեղարքունի» ենթատեսակի թվով 300 000 հատ մանրածուկ յուրաքանչյուրը 9,65 գրամ միջին զանգվածով ընդամենը՝ 2895 կգ բաց է թողնվել Կարճաղբյուր համայնքին հարող Սևանա լճի ջրային տարածքում:

Բաց թողնված ջրային տարածքում սահմանվել է շուրջօրյա հերթապահություն մանրաձկների բնական հարմարվողականությունը ապահովելու համար:

Արդյունագործական ձկնորսություն

ՀՀ կառավարության 2024 թվականի օգոստոսի 29-ի N¹³⁶¹-Ն որոշման համաձայն սահմանվել է Սևանա լճից սիգի արդյունագործական որսի 422 տոննա չափաքանակ՝ սեպտեմբերի 1-ից մինչև նոյեմբերի 15-ն ընկած ժամանակահատվածի համար: Համաձայն Կառավարության 2019 թվականի նոյեմբերի 21-ի N1667-Ն որոշման՝ Սևանա լճում սիգ ձկնատեսակի արդյունագործական նպատակներով որս իրականացնելու համար, պայմանագիր կնքելու հայտերը ներկայացվել են ս.թ սեպտեմբերի 9-ը ներառյալ: Լիազոր մարմնի և ՍՊԸ-ների ու «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի միջև Սևանա լճում սիգ ձկնատեսակի արդյունագործական նպատակներով որս իրականացնելու իրավունքի թույլտվության պայմանագրերը կնքվել են 2024 թվականի սեպտեմբերի 10-ին:

ՇՄՆ-ի հետ կնքված պայմանագրերով 2024 թվականի **հոկտեմբերի 1-ից մինչև նոյեմբերի 15-ը ընկած** ժամանակահատվածում 9 կազմակերպությունների կողմից՝ 971 ձկնորսների միջոցով Սևանա լճում արդյունագործական նպատակով իրականացվել է ձկան որս մուտքի 24 կետերից, որի ընթացքում որսվել է ընդհանուր **324 142** կգ սիգ տեսակի ձուկ:

«Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի և շրջակա միջավայրի նախարարության միջև կնքված պայմանագրով 709 ձկնորսների կողմից 2024 թվականի **հոկտեմբերի 1-ից մինչև նոյեմբերի 15-ը** ընկած ժամանակահատվածում որսվել է **230 307** կգ սիգ տեսակի ձուկ:

Կադաստրի վարում և հողաշինարարություն.

Հիմք ընդունելով «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի տնօրենի մոտ կայացած գործակարգավարական խորհրդակցության №2 արձանագրության հանձնարարականը իրականացվում է ստուգայաց դադարեցված պայմանագրերի տարածքներ՝ փաստացի տիրապետման և գույքով ծանրաբեռնվածության փաստը ստուգելու նպատակով: Ֆիզիկական և իրավաբանական անձանց հետ կնքվել են 6 նոր պայմանագրեր, 6 համաձայնագրեր՝ վարձավճարի փոփոխության, 16 հողօգտագործողների պայմանագրային փաթեթներում կատարվել են տվյալների փոփոխություն: Կատարված փոփոխությունները փոխանցվել են տվյալների բազա:

Հողօգտագործողների կողմից տարբեր խնդրանքներով (ներդրումային ծրագրեր իրականացնելու, հողամասը օտարելու, նոր պայմանագրեր կնքելու, հողամասը ենթավարձակալությամբ տրամադրելու, գույքի բաժանում կատարելու և այլն) ՊՈԱԿ ներկայացրած դիմումները քննարկվել են ՊՈԱԿ-ի խորհրդի նիստում և դրանց տրվել է համապատասխան ընթացք:

ՊՈԱԿ-ի հողաշինարարի կողմից՝ ջրածածկ և ջրածածկման ենթակա տարածքներում իրականացվել է չափագրման և քարտեզագրման աշխատանքներ, ինչպես նաև իրականացվել է ՊՈԱԿ-ի վարձակալների վարձակալած տարածքների սահմանների ճշտման աշխատանքներ:

ՊՈԱԿ-ի տնօրենի մի շարք հրամանների համաձայն հողաշինարարը մասնակցել է մի շարք գնահատման հայտերի հանրային քննարկումների:

Պարկի տարածքում անտառտնտեսական աշխատանքներ.

Շրջակա միջավայրի նախարարության գլխավոր քարտուղարի և «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի միջև կնքված 2024թ. հունվարի 18-ին կնքված պետության կողմից դրամաշնորհի ձևով տրամադրվող ֆինանսական աջակցության գումարների օգտագործման մասին №ՇՄՆ-ԴՇ-24/03 պայմանագրի համաձայն՝ «Սևան» ազգային պարկի Դրախտիկ տեղամասում՝ ջրածածկ և ջրածածկման ենթակա տարածքներում անտառտնկարկների մաքրման նպատակով Դրախտիկ տեղամասի 1,2,4,5,6,7 քառակուսիների համար ներկայացված կատարողական ակտի շրջանակում Սևանա լճի ջրածածկ և ջրածածկման ենթակա տարածքներում անտառտնկարկների միջոցառումների փաստագրման և մոնիթորինգի իրականացման աշխատանքային խումբը մաքրված տարածք է այցելել՝ ԱԹՍ-ով իրականացված օրթոֆոտոնկարահանումների և աշխարհատեղեկատվական համակարգով վերլուծության արդյունքում փաստագրվել է Արտանիշ մասնաճյուղի Դրախտիկ տեղամասի 1,2,4,5,6,7-րդ քառակուսիներում մաքրված 5,5 հա մակերեսով ջրածածկ և ջրածածկման ենթակա տարածք: Մաքրման արդյունքում պահեստում կուտակված 188,87 խմ (չխըտացված), որից 6,07 խմ շինափայտի, 155,8 խմ վառելիափայտի և 27 խմ ցախ և ճյուղիկների արտահանման աշխատանքները մոտենում են ավարտին: Ներկայումս մաքրման աշխատանքներ են իրականացվում Դրախտիկ

տեղամասի 8,9,10,11 քառակուսիներում և 2024թ նոյեմբերի 29-ի դրությամբ մաքրվել է ավելի քան 10 հա տարածք, որը դեռևս կատարողական ակտով հանձնված չէ:

Արտանիշ տեղամասի 2-րդ պահաբաժնի 12-րդ քառակուսում և 4-րդ պահաբաժնի 15,16,24,27,28,29,30-րդ քառակուսիներում ջրածածկ և ջրածածկման ենթակա տարածքներում անտառտնկարկների մաքրման նպատակով նշահարված սահմանից դեպի լիճ ընկած հատվածում համարակալվել և հաշվեգնահատվել է թվով 3042 տարբեր տեսակի ծառեր, որոնց ընդհանուր ծավալը կազմում է 337,473 խիտ խմ, որից՝ 64,157 խմ շինափայտ, 236,9991 խիտ խմ վառելափայտ և 36,3169 խիտ խմ ցախ և ճյուղիկներ, վեր նշված 3042 ծառերի հաշվեգնահատման ցուցակները ներկայացվել են ՇՄՆ: ՇՄՆ-ի գլխավոր քարտուղարի 2024թ-ի նոյեմբերի 18-ի № 931-Ա հրամանով ստեղծված աշխատանքային խմբի ուսումնասիրությունների հիման վրա տրվել է № Ն/16.3/16472 հանձնարարականը, որով ՇՄՆ չի առարկել օրենքով սահմանված կարգով Արտանիշ տեղամասի 2-րդ պահաբաժնի 12-րդ քառակուսում և 4-րդ պահաբաժնի 15,16,24,27,28,29,30-րդ քառակուսիներում անտառմաքրման աշխատանքներին իրականացնելուն:

Էկոտրական ցանցերի համակարգի անխափան գործունեությունն անտառուղիներում, անտառների և անտառային հողերի տարածքներում հրդեհավտանգ վիճակը որպես արտակարգ իրավիճակների առաջացումը կանխարգելելու անհետաձգելի միջոցառում իրականացնելու նպատակով «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի և «Հայաստանի էկոտրական ցանցեր» ՓԲԸ-ի միջև 2024թ. մարտի 3-ի պայմանագրի և 2024թ. հուլիսի 18-ի համաձայնագրի համաձայն «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի Մարտունու տարածքի, Երանոս տեղամասի 2-րդ պահաբաժնի 21,22,23,24 քառակուսիներում, 3-րդ պահաբաժնի 26,29,32 քառակուսիներում, 4-րդ պահաբաժնի 35,38,40 քառակուսիներում («ՀԷՑ» ՓԲԸ-ի Գեղամա մասնաճյուղի Մարտունու էլ. ցանց, Երանոս 6կվՏ էլեկտրահաղորդման օդային գծի մոտ 1կմ հատված) նախատեսվել է իրականացնել էտման և հատման աշխատանքներ: «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի տնօրենի հրամանով դուրս է գրվել №000011, №000012 անտառհատման տոմսերը: Նշված աշխատանքները իրականացնելու նպատակով «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ը հայտարարել է գնանշման ընթացակարգ որի արդյունքում հաղթող ճանաչված «Սանի Լենդ» ՍՊԸ-ի և «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի միջև 2024թ. օգոստոսի 16-ին կնքել է ծառերը կտրելու և էտելու ծառայությունների մատուցման մասին № ՍԱՊ-ԳՀԾԲ-24/11 պայմանագիր: Պայմանագրով նշված աշխատանքները ավարտվել են, հատման և էտման արդյունքում կուտակված 359,74խմ չխտացված ծավալով փայտանյութը վերցվել է հաշվառմանն՝ ներկայաումս իրականացվում են փայտանյութի արտահանման աշխատանքներ:

«Սևան» ազգային պարկի տարածքին սահմանակից համայնքների բնակչության շրջանում բացատրական աշխատանքների իրականացում, այցելուների կենտրոնի և տարածքի այցելուներին տեղակատվության տրամադրում.

ՊՈԱԿ-ի գործունեության առավել կարևոր մանրամասների վերաբերյալ սահմանակից համայնքների բնակչությունը և հանրությունը իրազեկվել է ՊՈԱԿ-ի պաշտոնական կայքէջից և ֆեսբուքյան էջից:

ՊՈԱԿ-ի Այցելուների կենտրոնը կազմակերպել է հետևյալ միջոցառումները՝ «Միջատների կառուցվածքը՝ մեղու» էքսկուրսիա և ֆիլմի դիտում, «Բնությունը երեխաների աչքերով» ցուցահանդես, «Երկկենցաղներ. Մոդես» սեմինար-քննարկում, «Լճի էկոլոգիական հավասարակշռությունը և բնական խախտումները» ֆիլմի դիտում-քննարկում, «Դեղաբույսեր և դեկորատիվ բույսեր» էքսկուրսիա:

ՊՈԱԿ-ի Այցելուների կենտրոն է այցելել 745 այցելու, որոնցից 307-ը մասնակցել են վերոնշյալ միջոցառումներին:

2. Իրավական ապահովման բաժին.

ՊՈԱԿ է ստացվել 576 գրություն, որից 108-ը՝ շրջակա միջավայրի նախարարությունից, 468-ը՝ այլ իրավաբանական և ֆիզիկական անձանցից: Նշված գրությունները Գործառնության կարգին համապատասխան ժամանակին և պատշաճ ձևով մուտքագրվել են գրանցամատյաններում, այնուհետև հանձնվել են տնօրենին՝ մակագրության: Մակագրված գրությունները պատճենահանվել են և հանձնվել են համապատասխան բաժիններ: Իրականացվել է հսկողություն դրանց՝ սահմանված ժամկետներում պատասխանելու ուղղությամբ: Ելքագրվել է 854 գրություն, որից 59-ը՝ շրջակա միջավայրի նախարարություն:

Աշխատանքային անհրաժեշտությունից ելնելով պատրաստվել են տարաբնույթ դիմումներ և գրություններ:

Մարդկային ռեսուրսների կառավարում. Կազմվել է 43 անհատական/ներքին իրավական ակտեր, որից՝ 7-ը աշխատանքային պայմանագիրը լուծելու, 1-ը խրախուսելու, 1-ը չվճարվող արձակուրդ տրամադրելու, 1-ը հայրության, 13-ը ամենամյա նվազագույն արձակուրդ տրամադրելու, 9-ը աշխատողին գործուղելու, 11-ը այլ ներքին իրավական ակտերի վերաբերյալ:

ՊՈԱԿ-ում աշխատանքի է ընդունվել 5 մարդ, աշխատանքից ազատվել է 7 մարդ:

Իրավաբան. Պայմանագրերով սահմանված վարձավճարներն ուշացնելու համար 14 ֆիզիկական կամ իրավաբանական անձանց, որոնց ընդհանուր պարտքը 21101 547 ՀՀ դրամ է, ներկայացվել են պայմանագրերը միակողմանի վաղաժամկետ լուծման առաջարկներ:

ՀՀ ինտերնետով ծանուցման պաշտոնական կայքում հրապարակվել է 2 ծանուցումներ, պայմանագրերը միակողմանի վաղաժամկետ լուծման վերաբերյալ:

Կազմվել են 119 ծանուցումներ «Լավանդա սիթի» հանգստյան գոտու տարածքում սեփականության իրավունքով պատկանող տնակներով ծանրաբեռնված հողամասի համար պայմանագրեր կնքելու վերաբերյալ:

Կազմվել են շուրջ 60 գրություններ և գրությունների/դիմումների պատասխաններ:

ՀՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարաններ են ներկայացվել՝

- 1) 8 էլեկտրոնային հայցադիմում, ընդհանուր՝ 45 946 709 ՀՀ դրամ հայցագնով, որից 6-ը գումարի բռնագանձման, իսկ 2-ը գումարի բռնագանձման և պայմանագրի լուծման պահանջներով:
- 2) 1 դիմում կատարողական թերթը հարկադիր կատարումն ապահովող ծառայություն ներկայացնելու և 1 դիմում վճռի օրինական ուժ ստանալու փաստը 2-րդ կնիքով հաստատելու մասին:
- 3) 4 քաղաքացիական գործով ապացույց:
- 4) 4 դիմում վեճը սպառելու վերաբերյալ:

ՀՀ Վերաքննիչ քաղաքացիական դատարան է ներկայացվել 1 բողոք:

Դատարանի վճռով հօգուտ ՊՈԱԿ-ի բավարարվել են 1 հայցադիմում՝ 508587 ՀՀ դրամի պահանջով, կարճվել է 1 քաղաքացիական գործերի վարույթ՝ պատասխանողի կողմից գումարը վճարելու հիմքով:

ՊՈԱԿ-ի կողմից ներկայացված հայցադիմումների հիման վրա ՀՀ ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարաններում քննվում են 33 քաղաքացիական գործեր, որից 15-ը՝ գումարի բռնագանձման և պայմանագրի լուծման, 1-ը՝ պայմանագրի լուծման, 17-ը՝ գումարի բռնագանձման պահանջներով, ընդհանուր՝ 66 323 448 հայցագնով:

Իրավաբանը մասնակցել է 7 քաղաքացիական գործերով դատական նիստերի:

3. Ֆինանսահաշվապահական բաժին.

Համաձայն շրջակա միջավայրի նախարարության և ՊՈԱԿ-ի միջև 2024թ հունվարի 18-ին կնքված N ՇՄՆ-ԴՇ-24/03 պայմանագրի՝ պարկում գիտական ուսումնասիրությունների, անտառտնտեսական աշխատանքների կատարման և Սևանա լճի ջրածածկ անտառտնկարկների մաքրման ծառայությունների համար 2024 թվականի չորրորդ եռամսյակում ՊՈԱԿ-ին փաստացի տրամադրվել է 40913.6 հազար ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ): Համաձայն 2024թ հունվարի 18-ի N կնքված ՇՄՆ-ԴՇ-24/03 պայմանագրի համաձայնագր N°2-ի ՊՈԱԿ-ին պետք է տրամադրվի ևս 16960.6 հազար ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ): 4-րդ եռամսյակում ՊՈԱԿ-ին հատկացված դրամաշնորհի մեծությունը կկազմի 57874.2 հազար ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ), որից 12120.2 հազար ՀՀ դրամ ծախսվելու է Սևանա լճի ջրածածկման ենթակա անտառտնկարկների մաքրման աշխատանքների վրա, 41945.0 հազար ՀՀ դրամ ուղղվել է ՊՈԱԿ-ի աշխատակիցների վարձատրությանը, իսկ 3809.0 հազար ՀՀ դրամ լրիվ ֆինանսավորում տրամադրելու պարագայում ենթակա է վերադարձման 2024թ հունվարի 18-ին կնքված N ՇՄՆ-ԴՇ-24/03 պայմանագրի 4.3 կետի:

Գանձումներ. Պարբերաբար վարձակալները հեռախոսազանգով տեղեկացվել են իրենց վարձավճարների մասին, կազմվել են շուրջ 583 ծանուցումներ՝ «Պետական սեփականություն հանդիսացող հողամասի վարձակալության և/կամ կառուցապատման իրավունքի տրամադրման մասին» իրավաբանական կամ ֆիզիկական անձանց միջև կնքված պայմանագրերով նախատեսված վարձավճարների վերաբերյալ, որի արդյունքում հողի վարձավճարներից մուտքը կազմել է 61 084.0 հազար ՀՀ դրամ:

Գնումներ. ՊՈԱԿ-ի կարիքների համար ապրանքներ և ծառայություններ ձեռք բերելու նպատակով կազմակերպվել են 9 ընթացակարգ, որից՝ 4-ը մեկ անձ, 5-ը՝ գնանշման հարցում: Կազմակերպված ընթացակարգերի արդյունքում կնքվել են 6 պայմանագրեր:

4.Տնտեսական սպասարկման բաժին.

ՊՈԱԿ-ի տրանսպորտային միջոցներին տրամադրվել է դիզելային վառելիք, բենզին, գազ:

Ստորաբաժանումներին տրամադրվել է տնտեսական ապրանքներ և գրենական պիտույքներ:

Իրականացվել է շենք-շինությունների և հարակից տարածքների ձյան մաքրման աշխատանքներ:

Իրականացվել է ավտոտրանսպորտի աշխատանքի, վառելիքի և քայուղերի շարժի հաշվառում:

Անցկացվել է ավտոմեքենաների տեխնիկական գնում և կնքվել է ԱՊՊԱ պայմանագրեր:

Ապահովվել է խմելու ջրի, բնական գազի և էլեկտրաէներգիայի սպառման սարքավորումների անխափան աշխատանքը:

Տրանսպորտային միջոցների մասին կազմվել են թերությունների ակտեր, տեխնիկական բնութագրեր և ներկայացվել է համապատասխան գնման ընթացակարգեր կազմակերպելու համար:

«Սևան» ազգային պարկ»
ՊՈԱԿ-ի տնօրեն

/ստորագրություն/

Կ. Մնացականյան